

գիմեղու պարտաւորեալ է, տանելով իւր հետ պէտք եղած ընծայն:

2. Շէյխ-Պալի (մեղրաշէյխ) տուն, որք թուով քիչ են, կը բնակին մի գիւղ: Սոքա Սնուսէ գաղթած և բնակած են այս տեղ, որոց նախնիք հայ եղած են, թուրքանալէն յետոյ դարձեալ ժողովուրդը սովորած էր իրենց տան աւետարանին ուխտի գալ, կրօնամօլ քրդեր կը սպառնան որ աւետարանը անյայտացնէ, անյայտացնելէն յետոյ դարձեալ ուխտը կը շարունակեն. ուստի փախուստ կտայ, այս տեղ կը գայ. տեղս ևս Սաստուր գիւղ հաստատուած հայեր կը շարունակեն ուխտագնացութիւնը. նոյնը կանեն քրդեր, որով այս շէյխերու տունը ուխտագնացութիւնը կը շարունակեն և որպէս զի իւրեանց հիւանդութիւնը փարատուի և անասնոց պատահած հիւանդութիւն ևս վերանայ:

Շեռեանայ գլխից ի Մանագիերտ գաղթող հայերու մէջ կայր մի քահանայ, ունէր մի դեղեցիկ աղջիկ, որ Հասան խանի պատերազմներուն կը փախցնեն խաներն, կը տանեն Պարսկաստան, ուր մի հարուստ խան աղջկայ հետ կամուսնանայ:

Քահանայի խղճին մեծ խայթ եղած էր որ իւր սիրելի միակ աղջիկն՝ իւր հողին կորուսած էր, կը մտածէր թէ իւր աղջիկն ինչ հոգեկան ճնշման մէջ է: Քուրց զգեցաւ, ուխտեց մինչև իւր աղջիկը չը գանէ, տուն պիտի չը վերադառնայ: Բորիկ ոտով ճանապարհ ընկաւ, Պարսկաստան հինգ տարւոյ չափ տալն ու վերայ արաւ, ամէն կասկածաւոր քաղաք և գիւղ շրջեցաւ, ամեն տուն ել ու մուտ գործեց, չը յուսահատեցաւ